

ԱՊՐԻԼ 24

«Ի՛նչպիսիք մարդկանց նստակ ընդ երեսս
դառնաց եւ ոչ ոք իցէ որ ժողովիցէ»:
(Երեմիա)

Բ

... Հովն է, կ'անցնի,
Խաղաղութիւն աւազներուն, մեռելներուն:
Արեւն է նոր ու գեղեցիկ գեսին վրայ
Հայրենական,
Աւազներէն այսպէս գերում:
Ինձ' կը թրւի վրան ջուրին,
Կախարդական մեծ հայելի,
Ձոր կը զանցնէ երկու թելեր
Խորհուրդն ի վար անապատին.
Հորիզոնէն կարաւանն է որ կը բլիւի
Դանդաղ, սրտում,
Բըզբֆսրած որան ինչպէս,
Իրարու մէջ, իրարմէ դուրս:
Արեւն հողին մազմաղ կըրակ:
Կարաւանը կ'առաջանայ
Պըսուսեղով ինքն իր վրայ
Ամպին տակը ոսկեփռի միջօրէին.
Կսոր, կսոր, հալածական,
Գայլերու կեր հօտի ճրման:
Ո՛ր աշխարհէն թելն է փրթեր
Այս թաւալուն մարդոց խումբին,
Մարդէ՛ր՝ թէ ոչ մարդանըման
Շուրեր բոլոր:
Ո՞վ է խրլեր իրենց գէմին
Մեհաբը վառ,
Քանդեր շէմքը երբեմն աղուոր
Մասաղաթի հասակներուն:
Աչքեր միայն, բացում անգունդ,
Փորում քաղցի, փորում մահուան
Մասըներով:
Կուգան անոնք,
Ոտեր ուռած, իրաններ կախ,
Հիւծած ցամքած հողի գոյնով:
Իրենց հովէն դաժան ու բիրտ
Է այրուծին,

Մէջքերնին սուր եւ ուսերուն
Ալ հրազէն.
Շուքն են ըսեա անոնք մահուան:

Կուգան անոնք բիլ ջուրերէն
Եւ արտերէն համակ զմրուխս,
Դէպ՝ գերեզմանն այս աւազին:
Քար են կտրեր զէմքերն ամէն,
Շրթներն անոնց սարուփանիւս
Բան մը կապոյս,
Որ կը պատնէ դիակն ամբողջ
Մահուան բերնին:
Բայց կը քալեն ծեր ու մանուկ,
Կին եւ աղջիկ,
Երբեմն եղած այս աշխարհէն:
Դողդրղազին մերթ կը փրլի ճամբուն վըրայ
Ծերունի մը ցամփած իսպառ,
Մինչ իր ուսին կ'իջնէ մտաւն
Ծանրը, անգութ.
Կը խրքըրտան լոկ ոսկորներ,
Դոց են աչքեր,
Դող մը վերջին քթունքներուն,
Անէ՛ծփ, աղօ՞թփ, մարդ չի գիտէ:
Թափօրն է այս որոնց գրուած
Է հոն մեռնիլ,
Մեռնելէ վերջ ողջ ամիսներ
Թաթին ներքեւ ծեծին, քաղցին:
Դագաղն է մէկ այդ բոլորին,
Զոր կը կըրեն իրենց ուսին:

Կը ծանրանան ու կը փրթին
Թեւերը գոյգ մօր մ'ըսպառած,
Զըգելով վար
Ժամեր ի վեր անենչացած
Կըծիկը խեղճ ոսկորներուն
Իր զաւակին:
Կը նայի ետ, չըգիտնալով ուրն ու ինչուն.
Օղակ օղակ կը կըծկըւի
Դէմքի կաթին. գոց են աչքեր,
Հառաջ մը լոկ անմարդկային կը բարձրանայ
Ընդհատ ընդհատ, ոսկոր ոսկոր:
Կարաւանը կը մօտենայ,

Ճամբու եզրին՝ շուրջ է սրդուց,
 Ումէ փախեր՝ պարոյրն աղուոր դնողներնեւ,
 Վերածելով մականդակի
 Կըլորութիւնն իր մանկական,
 Խոտոր գլխուն անոր փոխան
 Ճըմուռ նըմուռ բան մ'է դրուած,
 Հազիւ կեցած ոսկորներու ծխնիններուն:
 Որդիք փխլէն, ականջներէն
 Օղակ օղակ կը թափին վար,
 'Իծխեմ նըրաւ, ան ուշ է դեռ,
 Ու կը ցնցուին ջղագալար
 Ցցուած ուսերն:

Քիչ մը անդին,
 Դիակն է սեւ կընոջ մը մերկ,
 Առանց ծալքի լարուած վըրան.
 Քովիկն անոր, մեհաֆսի թել,
 Ինկեր պառկեր է իր մանկիկ,
 Բազուկն որուն զերթ չոր խըռիւ
 Կը ներմկնայ իր մայրիկի ուռած փորին:

Կ'անցնի թափօրն անոնց փոլէն,
 Երեսներէն անոնց մարդու ոչ մէկ շարժում:
 Փոքորիկը ամէնօրեայ արիններուն
 Աւեր տարեր՝ այդ դէմքերէն,
 Մարդաւայել ամէն յուզում:

Անոնք բոլոր կու գան մահուան,
 Ու կը բերեն մահն իրենց հետ,
 Կըմախք, կըմախք:

Վ.ՏԱՐԱՆԴԻ

(Շարունակելի՝ 2)

